

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒՆ ՄԱՐԻՔԵԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային
կենտրոնի դասախոս,
աշխարհագրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՀՀ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՆ ՈՒ ՏԱՐԱՆՑԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Պետության աշխարհաքաղաքական դիրքն ու տարանցիկ նշանակության ենթակառուցվածքը «պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի կարևոր բնութագրիչներ են, պետության աշխարհաքաղաքական կարևոր ռեսուրսներ: «Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների վերահսկման և դրա համար մրցակցության գործընթացում որոշակի և անկանխատեսելի խնդիրների լուծման համար պետության կողմից օգտագործվելիք հնարավոր և հասանելի, տվյալ պահին հայտնի միջոցների և դրանց ստացման աղբյուրների ամբողջությունն է»¹:

Մյուսնք այն ռեսուրսներն են, որոնք պետության կողմից օգտագործվում են (կամ կարող են օգտագործվել) ենթակարգային տարբեր մակարդակի տարածքների վերահսկման և դրա համար մրցակցության գործընթացում: Ընդ որում, այդ ռեսուրսներն օգտագործվում են (կամ կարող են օգտագործվել) ոչ միայն բարձր (1-ին և 2-րդ), այլև ցածր կարգի աշխարհաքաղաքական ուժերի կողմից: Բարձր կարգի ուժերն իրենց աշխարհաքաղաքական ռեսուրսները կարող են օգտագործել ոչ միայն ինքնիշխանության ապահովման և պահպանման, այլև տարածաշրջանում կամ ամբողջ աշխարհում միջպետական մրցակցության և ազդեցության ոլորտների ընդլայնման համար: Ցածր կարգի (3-րդ, 4-րդ և 5-րդ) ուժերը (մասնաշրջանային) իրենց աշխարհաքաղաքական սուղ ռեսուրսները հիմնականում օգտագործում են (պետք է օգտագործեն) բարձր կարգի աշխարհաքաղաքական ուժերի կողմից գործադրվող աշխարհաքաղաքական այլ ռեսուրսների դեմ հակակշիռների ստեղծման և այդ երկրների էքսպանսիային (մասնավորապես՝ ժամանակակից տեսակներին) արդյունավետ դիմագրավելու համար:

Պետական տարածքը (ինչպես մասնաշրջանային ընդհանրապես) համարվում է աշխարհաքաղաքական ամենակարևոր ռեսուրսը: Այն որևէ պետության գերիշխանության տակ գտնվող երկրագնդի մաս է, որի սահ-

¹ Ս. Սարգսեյան, «Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը, «Կանթեղ», 2011, 3(48), էջ 126:

մաններում տվյալ պետությունը իրականացնում է տարածքային տիրապետություն և ազգային իրավագործություն»²:

Աշխարհաքաղաքական ռեսուրսների մեջ պետական տարածքի առանձնահատուկ դերը պայմանավորված է հատկապես նրանով, որ, լինելով ինտեգրալ իրողություն, կրում է նաև աշխարհաքաղաքական այլ ռեսուրսներ, որոնցից են աշխարհաքաղաքական դիրքն ու տարանցիկ նշանակության ենթակառուցվածքը: Այս ռեսուրսների համատեղ ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ սրանք սերտորեն փոխկապված են. պետության աշխարհաքաղաքական դիրքը շատ բանով պայմանավորված է դրա տարանցիկ նշանակության ենթակառուցվածքով և, ընդհակառակը՝ պետության աշխարհաքաղաքական դիրքը էականորեն ազդում է տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի զարգացման վրա:

ՀՀ աշխարհաքաղաքական դիրքը: «Աշխարհաքաղաքական դիրքը» «աշխարհագրական դիրք» հասկացության համակարգի բաղադրիչ է: «Географический энциклопедический словарь»-ը աշխարհագրական դիրքը տարածականության (մակերեսի), բնական լանդշաֆտի տիպի (տիպերի), տնտեսական յուրացվածության աստիճանի, «հասարակության գործունեության տարածական բազիսի» դեր կատարելու ունակության հետ միասին ներկայացնում է որպես տարածքի բնութագրիչ-ռեսուրս, ռեսուրսների հատուկ տեսակ³: Աշխարհաքաղաքական հետազոտություններում ավանդաբար օգտագործվել է «աշխարհագրական դիրքը», սակայն վերջին տարիներին ավելի հաճախ են շրջանառվում «աշխարհաքաղաքական դիրք» և դրա բաղադրիչ «պետության աշխարհաքաղաքական դիրք» հասկացությունները: Սակայն սրանք նոր ձևավորվող և տեսական ու մեթոդաբանական տեսանկյունից թերմշակ են, իսկ դրանց գիտական հետազոտությունն ընդգրկում է բարդ խնդիրներ, այդ թվում՝ միջառարկայական⁴: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով «աշխարհաքաղաքականը» սահմանող հասկացությունը⁵, կարելի է ասել, որ պետության աշխարհաքաղաքական դիրքը դրա աշխարհագրական դիրքն է՝ տարածքների վերահսկման և դրա համար մրցակցության դիտանկյունից:

Աշխարհաքաղաքական երևույթների տարաբնույթ լինելու պատճառով պետության համապատասխան դիրքը որոշվում է տարաբնույթ համակարգերի (առանձին պետություններ, պետությունների դաշինքներ, տարածքային-էթնիկական հակամարտությունների գոտիներ, տնտեսական-տարածքային համակարգեր, քաղաքակրթություններ, կրոնական միություններ և այլն) հետ առնչություններով: «Պետության աշխարհաքաղաքական դիրքը» սերտ փոխազդեցության մեջ է «աշխարհագրական դիրք»

² Геополитика: Популярная энциклопедия. Авторы-сост. Баришполец В., Баришполец Д., Манилов В. / Под общей ред. Манилова В., М., 2002, с. 562.

³ Ст'ю Географический энциклопедический словарь. Понятия и термины. Гл. ред. Трешников А., М., 1988, էջ 307:

⁴ Ст'ю **Ս. Մարիբեկյան**, Պետության աշխարհաքաղաքական դիրքի հետազոտության մեթոդաբանության մշակման հիմնախնդիրը, «Օրենք և իրականություն», 2008, N 5 (151), էջ 42-43:

⁵ Ст'ю **Ս. Մարիբեկյան**, «Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը, նշվ. հրատ., էջ 126:

հասկացութային համակարգի այլ բաղադրիչների («քաղաքաաշխարհագրական դիրք», «տնտեսաաշխարհագրական դիրք», «ժողովրդագրական-աշխարհագրական դիրք», «էթնոմշակութային դիրք» և այլն) հետ, օգտվում է դրանց այն բնութագրիչներից, որոնք վերաբերում են տարածքների վերահսկման գործընթացին:

«Պետության աշխարհաքաղաքական դիրքի» բնութագրի վրա էական (օժանդակող և խոչընդոտող) ազդեցություն ունեն մաս բնական գեոհամակարգերը (ծով, գետ, լեռնաշղթա և այլն). դրանք տվյալ պետության նկատմամբ աշխարհաքաղաքական այլ սուբյեկտի (սուբյեկտների) կողմից կարող են օգտագործվել որպես ազդեցության գործոն կամ՝ ընդհակառակը:

Աշխարհաքաղաքական դիրքը պետության ոչ միայն կարևորագույն ռեսուրսներից է, այլև հզորության, անվտանգության և զարգացման կարևոր բնութագրիչ, գործոն: Դա իր բովանդակությամբ բարդացնում է վերջիններիս բնութագրիչների համակարգերի մշակման խնդիրները, որոնց լուծումն անհրաժեշտ է պետության աշխարհաքաղաքական հետազոտության արդյունավետության ապահովման համար:

Փորձենք ներկայացնել ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի կարևոր բնութագրիչները.

- ՀՀ-ն գտնվում է բեկման գոտում, որտեղ առկա են տարածքային-էթնիկական հակամարտություններ, և բախվում են առաջին կարգի աշխարհաքաղաքական ուժերի (մասնավորապես՝ ՌԴ, ԱՄՆ և ԵՄ) շահերը:

- ՀՀ-ն իր 4 անմիջական հարևաններից երկուսի (Թուրքիա և Ադրբեջան) հետ դիվանագիտական հարաբերություններ չունի, դրանց հետ սահմանների ընդհանուր երկարությունը *դեյուրե* 1193 կմ է (ՀՀ սահմանների ընդհանուր երկարության 4/5-ից ավելի), թեև ԼՂՀ *դեֆակտո* գոյության հետևանքով ՀՀ և Ադրբեջանի փաստացի սահմանը ավելի քան կրկնակի կրճատվել է: Եթե հաշվի առնենք Թուրքիայի և Ադրբեջանի աշխարհաքաղաքական նպատակները⁶ և արցախյան հակամարտության իրավաբանորեն լուծման իրական հեռանկարի բացակայությունը, ապա ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի վերը նշված հատկանիշի բացասական դերը մեր երկրի համար ոչ միայն մեծ է, այլև երկարաժամկետ: Իսկ դիվանագիտական հարաբերություններ ունեցող անմիջական հարևան երկրների հետ սահմանամերձ շրջանների հիմնական մասը բնակեցված է ՀՀ-ի նկատմամբ թշնամաբար կամ ոչ բարյացակամ տրամադրված, բնական աճի բարձր ցուցանիշներ ունեցող թրքալեզու էթնոսների ներկայացուցիչներով (մաս Իրանի հյուսիսային օսթանները):

- Երկու հարևանների հետ փակ սահմանները, ինչպես մաս դեպի ծով անմիջական ելք չունենալը ՀՀ-ի համար Վրաստանի և Իրանի տարածքները դարձնում են առանձնահատուկ նշանակության, որից հաճախ օգտվում են վերջիններս, մասնավորապես՝ Վրաստանը: Սակայն այս իրողությունը կարևոր դեր է խաղում Վրաստանի և Իրանի հետ ՀՀ աշխարհաքաղաքական կառուցողական հարաբերությունների ձևավորման գործում:

⁶ Տե՛ս **Landau J.**, Pan - Turkism. From Irredentism to Cooperation. Indiana University press. Blomington and Indianapolis, 1995: **Վ. Գրիգորյան**, «Միացյալ և մեծ Ադրբեջան»՝ ի հաշիվ Իրանի և Հայաստանի, «Իրան Նամե», 1996, թիվ 4-5 (20-21), էջ 29-30:

- ՀՀ-ն այն փոքրաթիվ երկրներից է, որի աշխարհաքաղաքական պատկանելության փոփոխությունը կարող է մակրոտարածաշրջանում ուժերի ենթակարգության, մինչև անգամ առաջին կարգի ուժերի ազդեցության ոլորտների մեծ փոփոխության պատճառ դառնալ (աշխարհաքաղաքական բանալի է):

- Մեր երկիրը կատարում է կանխարգելող, զսպող գործառույթ. Թուրքիայի էքսպանսիայի ճանապարհին հանդես է գալիս որպես սանիտարական կորդոն (արգելապատնեշ), ինչպես նաև կանխարգելում է Արցախի նկատմամբ Ադրբեյջանի ոտնձգությունները:

- ՀՀ-ն գտնվում է Ռուսաստանի ազդեցության ոլորտում, սակայն ունի նաև սահմանամերձ պետության (լիմիտրոֆ) հատկանիշ՝ սահմանակցում է ՀԱԴԿ-ին (NATO), սակայն լիարժեք լիմիտրոֆ չէ, որովհետև անդամակցում է ՀԱՊԿ-ին (ՕԴԿԵ):

- Ներկայումս ՀՀ-ի վրա աշխարհի առաջին կարգի ուժերի (ՌԴ և ԱՄՆ) կողմից արդյունավետորեն կիրառվում են էքսպանսիայի ժամանակակից տեսակները (տնտեսական, մշակութային-գաղափարական, տեղեկատվական):

Եթե այս ամենին ավելացնենք նաև տարածաշրջանային միասնացման (ինտեգրման) ծրագրերին ՀՀ մասնակցության ցածր մակարդակը (մեր երկրին տեղ չի տրվում հատկապես տնտեսական ծրագրերում), ապա ակնհայտ է ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի անբարենպաստությունը, որը, անվտանգության և զարգացման առումով, բացասական մեծ դեր է կատարում⁷:

ՀՀ տարանցիկ նշանակության ենթակառուցվածքը: Ենթակառուցվածքը նյութական արտադրության գործընթացի գործառույթական և բնակչության առօրյա կյանքի ապահովման անհրաժեշտ կառույցների, շենքերի, համակարգերի և ծառայությունների ամբողջությունն է⁸, պետության տարանցիկ նշանակության ենթակառուցվածքը՝ պետության տարածքում առկա այն կառույցների, շենքերի, համակարգերի և ծառայությունների ամբողջությունը, որն օգտագործվում է մեկ ուրիշ երկրի (երկրների) այլ երկրի (երկրների) քաղաքացիների, բեռների, ուղեբեռների, փոխադրամիջոցների, փոստի փոխանցման համար: Ենթակառուցվածքը (նաև՝ տարանցիկ նշանակության) ունի օժանդակող, սպասարկող նշանակություն, ընդ որում, դրա գործառույթները, որպես օրենք, միջոյության են: Պետության տարանցիկ նշանակության ենթակառուցվածքը, բացի սեփական երկրի արտադրությանն ու բնակչությանը սպասարկելու գործառույթներից, ունի նաև այլ երկրների (մասնավորապես՝ հարևան) արտադրությանն ու բնակչությանը սպասարկելու գործառույթներ, օժանդակում է միջազգային տարանցմանը: Դրա զարգացման մակարդակը արտահայտում է «պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի յուրացման, էֆեկտիվ (արդյունավետ) աշխարհաքաղաքական տարածության ձևավորման և

⁷ Տե՛ս **Ս. Մարքեբեկյան**, ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի որոշ առանձնահատկությունների մասին, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», 2004, N 3, էջ 92-94:

⁸ Տե՛ս Географический энциклопедический словарь. Понятия и термины, նշվ. հրատ., էջ 114-115:

գարգացման գործում տվյալ պետության մասնակցության մակարդակը: Պետության տարանցիկ նշանակության ենթակառուցվածքն ունի դրական ազդեցություն մի քանի տեսանկյունից. եկամտի աղբյուր է, այլ երկրների վրա տնտեսական և քաղաքական ազդեցության գործոն՝ համամոլորակային և տարածաշրջանային նշանակության աշխարհաքաղաքական լծակ: Այդ ենթակառուցվածքի տարրերից կարևոր են մասնավորապես՝ հաղորդակցության վերերկրյա ճանապարհները, խողովակաշարերը, նավարկելի ջրանցքները, օդանավակայանները, էլեկտրահաղորդման գծերը:

Տարանցիկ երկրներից որոշակի կախվածություն ունեն հատկապես նավթ և գազ արտահանող և ներմուծող, ինչպես նաև անբարենպաստ աշխարհագրական դիրք ունեցող երկրները, որոնք ստիպված են արտաքին տնտեսական հարաբերություններն իրականացնել հարակից երկրների ենթակառուցվածքների միջոցով:

Ինչ վերաբերում է ՀՀ տարանցիկ նշանակության ենթակառուցվածքին, ապա այստեղ այդպիսի նավթամուղներ, գազամուղներ և երկաթուղիներ չկան: Սակայն, եթե ՀԽՍՀ-ում այդպիսի նավթամուղներ և գազամուղներ չեն էլ եղել, ապա այդպիսի երկաթուղիներ եղել են: Երբ դեռևս ակտիվ փուլ չէր թևակոխել արցախյան հակամարտությունը, ՀԽՍՀ-ն երկու ուղղությամբ ԽՍՀՄ երկաթուղային ցանցին ելք էր տալիս դեպի Մերձավոր Արևելքի երկրներ՝ Գյումրի (Լենինական)-Ախուրյան-Կարսով դեպի Թուրքիա, Սիրիա, Իրաք, միջերկրածովյան նավահանգիստներ, իսկ Երևան-Ջուլֆա-Թավրիզով՝ դեպի Իրան, ընդհուպ մինչև Պարսից ծոցի նավահանգիստները: ՀԽՍՀ երկաթուղիները ամբողջ ԽՍՀՄ-ի, ինչպես և Մերձավոր Արևելքի երկրների համար ունեին կարևոր տարանցիկ նշանակություն: Ներկայումս չեն գործում ինչպես Երևան-Ջուլֆա, այնպես էլ Ախուրյան-Կարս հատվածները: Իսկ, որ ավելի վատ է, կառուցվելիք Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգիծը հետագայում կփոքրացնի Կարս-Ախուրյան-Գյումրի հատվածի տարանցիկ նշանակությունը, եթե անգամ գործի:

Արցախյան հակամարտության պատճառով ներկայումս չեն գործում նաև նախկինում տարանցիկ, միութենական նշանակության Ղազախ-Իջևան-Դիլիջան-Սևան-Երևան-Արտաշատ-Արարատ-Նախիջևան ավտոճանապարհի Իջևան-Ղազախ և Արարատ-Նախիջևան հատվածները: Սակայն ՀՀ տարածքում կան տարանցիկ նշանակության ավտոճանապարհներ: Դրանք ՀՀ-ն տարանցելու հնարավորություն են տալիս Վրաստանից դեպի Իրան և հակառակ ուղղությամբ: Այդ ավտոճանապարհներից օգտվում են ոչ միայն Իրանի և Վրաստանի, այլև այլ երկրների, մասնավորապես՝ Թուրքիայի քաղաքացիները, տեղափոխվում են բեռներ, ուղեբեռներ, փոխադրամիջոցներ: ՀՀ-ն տարանցելու հնարավորություն են տալիս Մեղրի-Կապան-Գորիս-Սիսիան-Արտաշատ-Երևան ավտոճանապարհի շարունակությունը հանդիսացող և տարբեր ուղղություններով դեպի Վրաստան տարածվող Երևան-Աշտարակ-Գյումրի-Աշոցք, Երևան-Աշտարակ-Ապարան-Սպիտակ-Վանաձոր-Ալավերդի-Բազրատաշեն և Երևան-Սևան-Դիլիջան-Իջևան-Բազրատաշեն ավտոճանապարհները: Տարանցիկ կարևոր նշանակություն ունի նաև Դիլիջան-Վանաձոր հատվածը, որը միացնում է Երևանից դեպի Բազրատաշեն ձգվող երկու ուղղությունները,

ինչպես նաև Եղեգնաձոր-Մարտունի-Սևան հատվածը, որը, Մեղրի-Կապան-Գորիս-Սիսիան-Եղեգնաձոր ավտոճանապարհը միացնելով Երևան-Սևան ավտոճանապարհին, փոքրացնում է Մեղրի-Բագրատաշեն աշխարհագրական և տնտեսական հեռավորությունը՝ Երևանով անցնող ավտոճանապարհի հետ համեմատած:

Իրանն ու Վրաստանը օգտվում են նաև ՀՀ բարձր լարման էլեկտրահաղորդման գծերից (էլեկտրաէներգիա է արտահանվում այդ երկրներ), սակայն դրանք տարանցիկ նպատակով չեն օգտագործվում:

Կարևոր նշանակություն ունի «Զվարթնոց» օդանավակայանը, որը սպասարկում է ոչ միայն այստեղ վայրէջք կատարող, այնուհետև ճանապարհը շարունակող, այլև առանց վայրէջքի ՀՀ օդային տարածքով անցնող օդանավերի, դրանց ուղևորների ու բեռների տարանցումը, ապահովում անվտանգ թռիչք: Վայրէջքով ՀՀ-ն ամենաշատը տարանցում են Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և Միջին Արևելքի երկրների օդանավերը (մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունից դեպի Իրան, Ուկրաինայից դեպի ԱՄԷ և հակառակ ուղղություններով թռչող): Սակայն ՀՀ տարածքով անցնող օդանավերի գերակշիռ մասը անցնում է առանց վայրէջքի: Նույն՝ Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրներից դեպի Միջին Արևելքի երկրներ և հակառակ ուղղություններով թռչող օդանավերի մի մասը ՀՀ-ն տարանցում է առանց վայրէջքի: ՀՀ-ն առանց վայրէջքի շատ են տարանցում նաև Արևմտյան Եվրոպայի և Հարավային Ասիայի, ինչպես նաև Ասիայի տարբեր տարածաշրջանների (Հարավարևմտյան Ասիա, Միջին Ասիա, Հարավային Ասիա) երկրների միջև օդային կապ հաստատող օդանավերը (օրինակ՝ Գերմանիայից Հնդկաստան, Թուրքիայից Ուզբեկստան, ԱՄԷ-ից Հնդկաստան և հակառակ ուղղություններով թռչող): Առանձնահատուկ պետք է նշել ՀՀ օդային տարածքի և «Զվարթնոց» օդանավակայանի տարանցիկ դերը Թուրքիայից Ադրբեջան և հակառակ ուղղությամբ թռչող օդանավերի համար: ՀՀ օդային տարածքը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հին աշխարհի, այլև հին և նոր աշխարհների երկրների միջև օդային կապի հաստատման համար: ՀՀ տարածքով (հիմնականում առանց վայրէջքի) անցնում են Հարավարևմտյան Ասիայից դեպի ԱՄՆ և հակառակ ուղղությամբ թռչող օդանավերը (սրանք ճանապարհին վայրէջք են կատարում Արևմտյան Եվրոպայի օդանավակայաններում):

Ինչ վերաբերում է ՀՀ-ում տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի այլ տարրերի ստեղծման և զարգացման հնարավորություններին, ապա դրանք շատ փոքր են: Մասնավորապես՝ 2009 թ. շահագործման հանձնվեց Իրան-Հայաստան գազամուղը, որը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հնարավորությունների մեծացմանն ուղղված քայլ էր, սակայն մեր հանրապետության աշխարհաքաղաքական խոցելիությունը և Ռուսաստանի շահերը հնարավորություն չտվեցին դառնալու Իրանի գազի արտահանման համար տարանցիկ երկիր: Սա ոչ միայն լրացուցիչ եկամուտներ կբերեր ՀՀ-ին, այլև կմեծացներ դերը տարածաշրջանում:

Եթե այսօր հիմնականում շրջափակումն ու առաջին կարգի որոշ ուժերի շահերն են խոչընդոտ հանդիսանում ՀՀ-ում տարածաշրջանային

նշանակության ենթակառուցվածքի նոր տարրերի ստեղծման և առկաներին տարանցիկ նշանակություն տալու գործում, ապա մինչև սառը պատերազմի աշխարհակարգի ավարտը ԽՍՀՄ քաղաքական և տնտեսական հարաբերությունների տրամաբանությունն էր թելադրում նշված խնդիրների նկատմամբ վերաբերմունքը: Ներկայումս աշխարհաքաղաքական անվտանգության ապահովման նպատակով ՀՀ-ն ստիպված է իրականացնել Իրանի հետ կապող երկաթուղու կառուցման ծրագիրը, որը կունենա մասնատարանցիկ նշանակություն: Սակայն ՀՀ բյուջետային սուղ հնարավորությունների պայմաններում այս ծրագիրը դժվար իրագործելի է՝ նույնիսկ Իրանի մասնակցության դեպքում:

ՀՀ-ում տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի սակավատարությունը և աշխարհաքաղաքական ամենամեծ կարևորության տարանցիկ նշանակության ենթակառուցվածքային տարրերի բացակայությունը ՀՀ-ին զրկում է դրանց միջոցով ստացվող եկամուտներից, տնտեսական և քաղաքական լծակներից:

Ինչպես աշխարհաքաղաքական դիրքի, այնպես էլ տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի տեսանկյունից ՀՀ-ն ոչ միայն խիստ բացասական բնութագիր ունի, այլև զգալիորեն զիջում է իր անմիջական բոլոր հարևաններին: Ընդ որում, ՀՀ աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքի առումով էական դեր ունի տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի գրեթե բացակայությունը, իսկ դրա տարրերի ստեղծման և ընդհանրապես զարգացման իմաստով՝ նրա աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքը:

ՀՀ-ի համար խիստ արդիական է աշխարհաքաղաքական դիրքի և տարանցիկ նշանակության ենթակառուցվածքի բնութագրի փոփոխությանն ուղղված պետական քաղաքականությունը, մասնավորապես՝ տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքի զարգացման ծրագրերին մասնակցությանը միտված արտաքին քաղաքականությունը, աշխարհաքաղաքական ուժերի վերահսկմանը դիմագրավելու ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ռացիոնալ քաղաքականությունը:

САСУН САРИБЕКЯН

*Лектор научно-образовательного
международного центра НАН РА,
кандидат географических наук, доцент*

Геополитическое положение и инфраструктура транзитного значения РА. Геополитическое положение и инфраструктура транзитного значения государства важные характеристики геополитического ресурса „государственная территория”, важные геополитические ресурсы государства.

В статье представлены характеристика и важность этих ресурсов, основные характеристики геополитического положения РА и картина инфраструктуры транзитного значения РА.

SASUN SARIBEKYAN

*Lecturer at International Scientific-
Educational Centre of the Academy of
Sciences of the RA, PhD in geographical
sciences, associate professor*

Geopolitical position and infrastructure of transit value in the RA.-

Geopolitical situation and infrastructure having transit significance for any state represent the important characteristics of geo-political resource "public area", the important geopolitical resources of the state.

The article presents the characteristics and importance of these resources, the main characteristics of the geopolitical position of the RA and the picture of this infrastructure having transit value in the RA.